

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ ԿԱՐԵՆԻ

**ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՈԶ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Լևոնի Սարգսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի

տնտեսագիտության թեկնածու
Հարությունյան Նաիրի Հենրիկի

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. դեկտեմբերի 4-ին, ժամը 13:30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. հոկտեմբերի 21-ին:

**015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ



Կ.Ա.Զուրաբյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման վճռորոշ պայմաններից մեկը տնտեսության արդյունավետ գործառնումն է: Վերջինիս կարևոր նախապայմաններից է առևտրային կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը: Վիճակագրությունը փաստում է, որ մի շարք առևտրային կազմակերպություններ չեն կարողանում շարունակել իրենց եկամտաբեր գործունեությունը և արդյունքում դառնում են անվճարունակ: Նման իրավիճակը տնտեսության մեջ հանգեցնում է շղթայական ռեակցիայի, որի արդյունքում խաթարվում է ոչ միայն այս կամ այն առևտրային կազմակերպության բնականոն գործունեությունը, այլև առանձին ոլորտներ կարող են հայտնվել ֆինանսատնտեսական ծանր վիճակում: Շուկայական տնտեսության հիմնական ինստիտուտներից է առևտրային կազմակերպությունների սնանկության գործընթացի պետական կարգավորումը, որն իրականացվում է իրավական ակտերի և այդ գործընթացը սպասարկող ենթակառուցվածքների միջոցով: Համաձայն Doing business 2020-ի, որտեղ ներառված են 178 երկրների տվյալներ, «Անվճարունակության հիմնախնդրի լուծում» (Resolving Insolvency) ցուցիչով ՀՀ-ն զբաղեցնում է 95-րդ տեղը, Վրաստանը՝ 64-րդ տեղը, Ադրբեջանը՝ 47-րդը: ՀՀ հարևան մյուս երկրներում՝ Թուրքիայում և Իրանի Իսլամական Հանրապետությունում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար՝ 120 և 133-րդ տեղերը: Անվճարունակության հիմնախնդրի լուծման ցուցիչով ՀՀ-ն ԵԱՏՄ երկրների շարքում զբաղեցնում է ամենավերջին տեղը¹: Այդ ցուցանիշներով ՀՀ-ն Էականորեն զիջում է աշխարհի բազմաթիվ երկրներին: Համեմատության համար նշենք, որ ՀՀ-ում, համաձայն Doing business 2020 տվյալների, անվճարունակության տևողության (տարի), գործընթացի համար կատարված ծախսերի (%-ով ակտիվների մեջ) և անվճարունակության գործընթացում ընդգրկված ակտիվների արժեքի հետ վերադարձվող մեծությունները (ցենտերով՝ մեկ դոլարի նկատմամբ) կազմել են՝ 1,9 տարի, 11% և 39,2 ցենտ, մինչդեռ անվճարունակության խնդրի լուծման ցուցիչով առաջատար՝ 1-ից 4-րդ տեղերը զբաղեցնող երկրների շարքում պատկերը հետևյալն է. առաջին տեղը զբաղեցնող ֆինլանդիայում՝ 0,9 տարի, 3,5% և 88,0 ցենտ, երկրորդ տեղը զբաղեցնող ԱՄՆ-ում՝ 1 տարի, 10% և 81,0 ցենտ, երրորդ հորիզոնականը զբաղեցնող Ճապոնիայում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 0,6 տարի, 4,2% և 92,1 ցենտ, իսկ չորրորդ տեղում գտնվող Գերմանիայում՝ 1,2 տարի, 8% և 79,8 ցենտ²: Այլ կերպ՝ եթե նշված երկրներում առևտրային կազմակերպությունների անվճարունակության գործընթացը ծառայում է ինչպես այդ կազմակերպությունների, այնպես էլ ամբողջ տնտեսության առողջացմանը, ապա ՀՀ-ում անվճարունակության գործընթացի արդյունքում փոշիանում են առևտրային կազմակերպությունների ակտիվները և վերջին հաշվով տնտեսությունը կրում է զգալի վնասներ: Իսկ եթե նկատենք, որ խոսքը վերաբերում է ոչ փոքրաթիվ առևտրային կազմակերպություններին, ապա ակնհայտ կդառնա, որ նշված գործընթացը կարիք ունի ինչպես օրենսդրական, այնպես էլ կազմակերպական լուրջ բարեփոխումների և միջոցառումների ծրագրի մշակման:

¹Doing business –ի համաձայն անվճարունակության ցուցիչը հաշվարկվում է առևտրային կազմակերպությունների անվճարունակության գործընթացը բնութագրող երեք ցուցանիշների օգնությամբ՝ անվճարունակության գործընթացի տևողությունը (տարիներով), առևտրային կազմակերպության ակտիվների արժեքի նկատմամբ անվճարունակության գործընթացի իրականացման համար կատարված ծախսերը (%-ով ակտիվների մեջ) և անվճարունակության գործընթացում ընդգրկված ակտիվների արժեքի հետ վերադարձվող մեծությունը (ցենտներով՝ մեկ դոլարի նկատմամբ):

² Էլեկտրոնային ռեսուրսը՝ <https://www.doingbusiness.org/en/data/exploretopics/resolving-insolvency> (դիտման ամսաթիվը՝ 01.08.2020):

Սկսած 2020 թվականի կեսերից, կապված COVID-19 համավարակի հետ ողջ աշխարհը առերեսվել է մարդկության պատմության մեջ չտեսնված մասշտաբների հասնող ճգնաժամի հետ, ինչը լուրջ հիմնախնդիրներ է առաջացնում հատկապես առևտրային կազմակերպությունների անխափան և շահույթաբեր գործունեության իրականացման համար: Նշված հիմնախնդրի լուծման տարբեր ուղիների որոնումներն ու արդյունավետ լուծումների փնտրտույթը ներկայումս խիստ արդիական է դարձնում առևտրային կազմակերպությունների շահույթաբեր գործունեության իրականացումը:

Վերը նշված հանգամանքներն ու ստեղծված նոր պայմանները (միջավայրը) պահանջում են խորքային հետազոտությունների իրականացում, որոնք նպատակաուղղված են առևտրային կազմակերպությունների սնանկության կանխարգելմանը և նրանց ֆինանսատնտեսական գործունեության առողջացմանը, գոյություն ունեցող ինստիտուտների բարելավմանը, ինչպես նաև նորարարական կառուցակարգերի մշակմանը և կիրառմանը: Սնանկության կառավարման ու կարգավորման հիմնուղիների մշակումը ունի կարևոր գիտագործնական նշանակություն, ինչով էլ պայմանավորվում է աշխատանքի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է շուկայական տնտեսության առանցքային ինստիտուտներից մեկի՝ առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման կազմակերպատնտեսական կառուցակարգերի ու մեթոդների և սնանկության կանխարգելման հիմնական եղանակների, ինչպես նաև սնանկության ընթացակարգերի արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների և միջոցառումների մշակումը:

«Առևտրային կազմակերպությունների սնանկության կանխարգելման, ինչպես նաև սնանկացման կառավարման արդյունավետ մեթոդների ու կառուցակարգերի մշակման նպատակով առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ համակողմանի վերլուծելով սնանկության ողջ գործընթացը՝ քննության առնել առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական իրավիճակի որակական և քանակական բնութագրերը՝ ելնելով սնանկացման տնտեսաիրավական կարգավորումների ու հակաճգնաժամային կառավարման արդյունքներից,
- ✓ վեր հանել առևտրային կազմակերպությունների անվճարունակության և սնանկության տնտեսաիրավական կարգավորման հիմնահարցերը,
- ✓ հիմնավորել առևտրային կազմակերպությունների սնանկության կանխարգելման ու կառավարման կատարելագործման հիմնուղիները ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատմամբ,
- ✓ իրականացնել «Առևտրային կազմակերպությունների որոշակի ընտրանքի համար սնանկության առաջացման քանակական գնահատումներ, մասնավորապես՝ ըստ սնանկության հավանականության բացահայտման չափանիշի»:

Ատենախոսության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը սնանկության տեսանկյունից ուսումնասիրված «Ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպություններն են (այսուհետ՝ կազմակերպություն):

Հետազոտության առարկան կազմակերպությունների սնանկության գործընթացում դրսևորվող տնտեսական հարաբերություններն են և դրանց կարգավորման գործիքակազմը: Դրանք դիտարկվում են կազմակերպությունների ախտորոշման ու վարկանիշավորման դիրքերից՝ նպատակ ունենալով առաջադրել ֆինանսատնտեսական առողջացմանը միտված կարգավորումներ ու կառուցակարգեր:

Ատենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության համար տեսական ու մեթոդական հիմք են հանդիսացել հայրենական ու արտասահմանյան հեղինակների ոլորտի առաձնահատկությունների հետազոտմանը նվիրված ուսումնասիրությունները: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանդրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (1998թ.), ՀՀ դատական օրենսգիրքը (2018թ.), «Սնանկության մասին» ՀՀ օրենքները, «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը և ծրագրերը, ՀՀ կառավարության հայեցակարգերն ու որոշումները, ՀՀ վիճակագրական կոմիտեի (ՎԿ) հրապարակումները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, պետական կառավարման մարմինների պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի ու այլ միջազգային կառույցների զեկույցները, ՀՀ կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսաչափական, համեմատական, դիսկրետ մոդելավորման և գործոնային վերլուծության մեթոդներ և մոդելներ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Հետազոտության ընթացքում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

1. բացահայտվել են փոքր բաց տնտեսությունների համար համաշխարհայնացման և ինտեգրման պայմաններում ճգնաժամային իրավիճակում (այդ թվում՝ COVID-19-ով պայմանավորված) կազմակերպությունների սնանկության հիմնահարցերը,
2. բացահայտվել է կազմակերպությունների սնանկության ֆունկցիոնալ դերակատարումը դրա ծագումնաբանության և դրսևորման առանձնահատկությունների դիտարկման, սնանկության կանխարգելման հայրենական և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա,
3. համակարգված կերպով ներկայացվել են կազմակերպությունների սնանկության պատճառները, դրսևորման ձևերն ու կանխարգելմանն ուղղված տնտեսաիրավական կարգավորումների հիմնական ուղղությունները, միջոցառումներն ու առողջացման ծրագրերը,
4. մշակվել են սնանկության ախտորոշման ու կանխարգելմանն ուղղված ինստիտուտներ ու օրենսդրության բարելավման միջոցառումներ, որոնք կնպաստեն կազմակերպությունների անվճարունակության իմունիտետի բարձրացմանն ու սնանկության կառավարման բարելավմանը,
5. առաջարկվել են ըստ սնանկության հավանականության չափանիշի վարկանշման մեթոդական մոտեցումների՝ ՀՀ կազմակերպությունների որոշակի ընտրանքի համար սնանկության կանխարգելման մեթոդական մոտեցումներ: Էկոնոմետրիկ մոդելներին զուգահեռ ընդգրկվել են սնանկության հայտանիշների կարևորության գնահատման ու վարկանիշավորման թեստային (տեղեկատվական կշիռների) և փորձագիտական մեթոդներ և մոդելներ, այդ թվում՝ ինտեգրալային գնահատում, քինարական պրոբիթ մոդել, համակցված մեթոդ, դիսկրետ մոդելավորում և ներքին վարկանիշավորում:

Ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Իրականացված վերլուծություններից բխող առաջարկությունները, ինչպես նաև կազմակերպությունների սնանկության կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման համար առաջարկված միջոցառումները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր և սնանկության գործերով դատական մարմինների կողմից խնդրո առարկա կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, սնանկության

ախտորոշման մեթոդաբանության մշակման աշխատանքներում: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել կազմակերպությունների, սնանկության հիմնախնդիրներով հետաքրքրվող տնտեսագետների ու այլ հետազոտողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումները և հրապարակումները:

Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» և «Նորարարության տնտեսագիտություն» ամբիոնների համատեղ նիստում, ՀՀ Կենտրոնական բանկի 2018թ. նոյեմբերի 9-ի լուսնեթին, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և Երիտասարդ տնտեսագետների ասոցացիայի հետ համատեղ 2019թ. մարտի 21-ի կլոր-սեղան քննարկմանը: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 7 (յոթ) գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (108 անուն) և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 126 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը՝ առանց հավելվածների:


ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ **«Կազմակերպությունների սնանկության բացահայտման և կառավարման տեսամեթոդական հիմքերը»** գլխում քննարկվում են սնանկության տեսակները, ֆունկցիոնալ դերը շուկայական համակարգում, սնանկության կարգավորման միջազգային փորձը և կանխարգելմանն ուղղված մեթոդները: Առանձնակի ուշադրություն է դարձվում «անվճարունակություն» և «սնանկություն» տերմիններին: Անվճարունակությունն, ընդհանուր առմամբ, լայն հասկացություն է և նշանակում է ընդհանրապես վճարելու անկարողություն, իսկ սնանկությունը՝ տվյալ պահին վճարելու անկարողություն: Այլ կերպ՝ սնանկությունը նկարագրում է անվճարունակության մասնավոր դեպքը, երբ պարտապանի վճարման անկարողունակությունը վնասում է պարտատերերին, իսկ անվճարունակությունը բնութագրում է պարտապանի վճարման անկարողունակության փաստը: Սնանկության մասին օրենսդրությունը ՀՀ-ում առավել արագ փոփոխվող և զարգացող ինստիտուտներից է: Մինչևանկախացման շրջանում Հայաստանը սնանկության կարգավորման իրավական տարբերակ չի ունեցել, քանի որ նախկին ԽՍՀՄ ամբողջատիրական պլանային համակարգում կազմակերպությունների սնանկացումը բովանդակային առումով բացառված էր: ԽՍՀՄ փլուզումից հետո 1995թ. ընդունված «ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքի³ ընդունումը սնանկության իրավատնտեսական կարգավորման առաջին փորձն էր: Մեկ տարի անց ընդունվեց «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքը⁴: Այնուհետև խնդրի առավել համապարփակ կարգավորման նպատակով 2003թ. ընդունվեց ՀՀ

³ «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1995 թվականի մայիսի 17-ին, ՀՕ-141, հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=216>

⁴ «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1996 թվականի դեկտեմբերի 3-ին, ՀՕ-101, հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=375>

օրենքը «Անվճարունակության (սնանկության) մասին»⁵, իսկ 2006թ.⁶ ՀՀ «Սնանկության մասին» օրենքը, որը կարգավորում էր սնանկության իրավահարաբերությունները և իրավական նորմերը⁶: Սնանկության գործերի վարումն իրականացվում է սնանկության դատարաններում, որտեղ գործերը միանձնյա քննվում են սնանկության գործեր քննող դատավորի կողմից⁷:



Գծապատկեր 1.Սնանկության գործերի վարման ընթացակարգային սխեմա⁸

Ստորև աղյուսակում ներկայացված է ԵԱՏՍ և տարածաշրջանի երկրների անվճարունակության վարույթի տևողության համապարփակ սխեման:

⁵«Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2003 թվականի դեկտեմբերի 17-ին, ՀՕ-17-Ն, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1387>
⁶«Սնանկության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, ՀՕ-51-Ն, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=76772>
⁷ Հարկ է նշել, որ քանկերի և այլ ֆինանսական հաստատությունների դեպքում սնանկության ինստիտուտի կարգավորումները որոշակիորեն առանձնանում են, իսկ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունների համար կիրառվում է ընդհանուր իրավակարգավորում:
⁸Կազմվել է Ինդիանայի կողմից, աղբյուրը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ ընդունված 2006թ. դեկտեմբերի 25, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=76772>

Աղյուսակ 1. Անվճարունակության վարույթի տևողությունը եԱՏՄ և տարածաշրջանի երկրների օրինակով (տարի)⁹

Երկիր	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստան	1,9	1,9	1,9	1,9
Բելառուս	3	1,5	1,5	1,5
Ղազախստան	1,5	1,5	1,5	1,5
Ղրղզստան	2	1,5	1,5	1,5
Ռուսաստան	2	2	2	2
Վրաստան	2	2	2	2
Ադրբեջան	1,5	1,5	1,5	1,5
Իրան	4,5	4,5	4,5	4,5
Թուրքիա	4,5	4,5	5	5

Անվճարունակության վարույթի տևողությունը անվճարունակության հիմքերի բացահայտումից մինչև ֆինանսական առողջացումը կամ լուծարումը ընկած ողջ ժամանակահատվածն է¹⁰: Որքան ցածր է անվճարունակության վարույթի միջին տևողությունը, այնքան արագ էրկրի սնանկության կարգավորման օրենսդրական դաշտն ավելի կայուն է: Անվճարունակության վարույթի տևողությունը մինչև պարտատերերի առաջին ժողովը ընկած ժամանակահատվածը կազմում է 51-169 օր: Սրան հաջորդում է ֆինանսական առողջացման ծրագիրը, որի դեպքում ժամկետների նվազագույն շեմ չկա, իսկ առավելագույն շեմը 3 տարի է, կամ լուծարման գործընթացը, որտեղ ժամկետային սահմանափակումներ ընդհանրապես չկան: ԴատաԼեքս¹¹ էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն 2015-2020թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցվել է ֆինանսական առողջացման ընդամենը 4 դեպք՝ «ՊԱԳ Էսթեյթ», «Մակ Ֆիշ», «Բետոն Մարկետ» ՍՊԸ-ները և մեկ անհատ ձեռնարկատեր: Արձանագրե՞նք, որ գրեթե 5000 սնանկ ճանաչված կազմակերպությունների ցանկից ֆինանսական առողջացման դեպքերը եզակի են, ինչը խոսում է ֆինանսական առողջացման ոչ բավարար մակարդակի մասին: Համաշխարհային բանկի մեթոդաբանության համաձայն անվճարունակության վարույթի ծախսերը ներկայացվում են տոկոսներով՝ արտահայտված պարտապանի գույքի նկատմամբ:

Աղյուսակ 2. Անվճարունակության վարույթի ծախսերը պարտապանի գույքի նկատմամբ տարածաշրջանի երկրների օրինակով¹²

Երկիր	2012-2018թթ. (%)
Հայաստան	11
Վրաստան	10
Ադրբեջան	12
Իրան	15
Թուրքիա	14,5

⁹ Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ The World Bank Data, հասանելի է՝

<https://data.worldbank.org/indicator/IC.ISV.DURS?end=2018&locations=KG&start=2003&view=chart>

¹⁰ <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>, p.54. (դիտումն ամսաթիվը՝ 10.12.2018թ.)

¹¹ <http://datalex.am/>, դիտումն ամսաթիվը՝ 10.01.2020թ.)


¹² Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝

<https://data.worldbank.org/indicator/IC.ISV.DURS?end=2018&locations=KG&start=2003&view=chart>, (դիտումն ամսաթիվը՝ 10.12.2018թ.)

Կատարելով հատկանշական դիտարկում՝ փաստենք, որ 2003-2011թթ. ընթացքում Վրաստանում այս ցուցանիշը կազմել է 3,5%, իսկ 2012-2018թթ.՝ արդեն 10%, սակայն, 2003-2011թթ. Վրաստանում վարույթի տևողությունը եղել է 3,3 տարի, իսկ ահա 2018թ. այն նվազել է՝ դառնալով 2 տարի: Անվճարունակության վարույթի ծախսերի ծավալներով ամենափոքրը Նորվեգիան է՝ 1%, իսկ ամենամեծը՝ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը՝ 76%:

Ատենախոսության **երկրորդ՝ «Կազմակերպությունների սնանկության տնտեսաիրավական կարգավորումների ու գնահատման մեթոդաբանական հիմքերը ՀՀ-ում»** գլխում ներկայացվում են կազմակերպությունների սնանկացման տնտեսաիրավական կարգավորման հիմնախնդիրները և ՀՀ սնանկության ինստիտուտի կատարելագործման հիմնական ուղիները: ՀՀ կազմակերպությունների պարտավորությունները վերջին տարիներին աստիճանաբար աճել են և 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում են 3 տրիլիոն 582մլրդ ՀՀ դրամ¹³: Պարտավորությունների չափերի խնդրահարույց լինելու հանգամանքը ակնառու է դառնում, երբ այն համադրում ենք տվյալ տարվա արտաքին պետական պարտքի մեծության հետ: 2020թ. հունվարի 1-ի դրությամբ վերջինս կազմում է **2 753 204.9** մլն ՀՀ դրամ, որից 2 753 204.9 մլն ՀՀ դրամը ՀՀ կառավարության պարտքն է, իսկ 232 417.6 մլն դրամը՝ ՀՀ Կենտրոնական բանկին¹⁴:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված ՀՀ կազմակերպությունները 01.10.2019թ. դրությամբ գերազանցում են 177 հազարը, որոնցից շուրջ 93%-ը առևտրային կազմակերպություններն են, իսկ 7%-ը՝ ոչ առևտրային: Այդ կազմակերպությունների կառուցվածքն ու թվաքանակը բերված է ստորև:




Գծապատկեր 2. ՀՀ գրանցված կազմակերպությունների կառուցվածքն ու թվաքանակը 01.10.2019թ. դրությամբ¹⁵

¹³ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2019», էջ 424, հասանելի է՝ <https://armstat.am/file/doc/99516813.pdf>

¹⁴ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին», էջ 92, հասանելի է՝ https://www.armstat.am/file/article/sv_01_20a_232.pdf

¹⁵ Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ <https://www.e-register.am/am/docs/282>, (դիտման ամսաթիվը՝ 10.01.2020թ.)

Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի տվյալների՝ 2017թ. միայն առաջին ինը ամիսներին սնանկ է ճանաչվել 927 կազմակերպություն, այն պարագայում, երբ 2010թ. դրանց թիվը ընդամենը 79 էր¹⁶: 2019թ. հոկտեմբերի դրությամբ դրանց թիվը կազմել է 5062:



Գծապատկեր 3. ՀՀ սնանկացած կազմակերպությունների կառուցվածքն ու թվաքանակը 01.10.2019թ. դրությամբ¹⁷

Հարկ է նշել նաև, որ ՀՀ սնանկ կազմակերպությունները ոլորտային կտրվածքով բաշխված են հետևյալ կերպ՝ առևտուր՝ 51%, մշակող արդյունաբերություն՝ 20%, շինարարություն՝ 12%, կեցություն և հանրային սնունդ՝ 9% և փոխադրումներ՝ 8%:


Ստորև բերված աղյուսակում ներկայացված է սնանկացման գործերով վճիռների թվակազմը և պահանջի մեծության չափը:

Աղյուսակ 3. ՀՀ-ում սնանկացման գործերով վճիռները, պարտապանների պահանջն՝ ըստ տարիների¹⁸

Տարեթիվ	Վճիռների թվաքանակ	Պահանջի մեծությունը (մլն դրամ)	Պարտավորության չափը դատական մեկ վճիռի հաշվով (մլն դրամ)
2016	1020	64471,1	63,2
2017	1378	95422,3	69,2
2018	607	8523,1	14,0
2019	485	7289,0	15,0

Ստորև բերված է 2013-2018թթ. ընթացքում դատարան դիմած սնանկության գործերի վիճակագրական պատկերը:

¹⁶ Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ <http://www.petekamutner.am/>, (դիտման ամսաթիվը՝ 10.01.2020թ.)
¹⁷ Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ <http://www.petekamutner.am/>, (դիտման ամսաթիվը՝ 10.01.2020թ.)
¹⁸ Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ <http://www.petekamutner.am>



Գծապատկեր 4. Դատարան դիմած սնանկության գործերի թիվը ՀՀ-ում 2013-2018թթ. ընթացքում¹⁹

Ատենախոսության երրորդ՝ «Կազմակերպությունների սնանկության կառավարման կարարելագործման և գործոնների բացահայտման հիմնուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում իրականացվել է կազմակերպությունների ֆինանսական կայունության ինտեգրալային գնահատում սնանկության ռիսկի կառավարման համալսարանում: Տնտեսվարող սուբյեկտների գործունեության հիմնական բնութագրիչները՝ ֆինանսատնտեսական ցուցանիշները, ձևավորում են մի համակարգ, որտեղ կարևոր տեղ ունեն ֆինանսական կայունության գործակիցները: Դրանց միջոցով որոշակի մոդելների գործադրմամբ հնարավոր է դառնում պարզել կազմակերպությունների ֆինանսական կայունության աստիճանը: Վերջինս կազմակերպություններում դրսևորվում է վճարունակության, իրացվելիության, շահութաբերության, ֆինանսական ռեսուրսների և գույքի օգտագործման արդյունավետության, հուսալիության և մրցունակության ցուցիչներով առանձին-առանձին և դրանց համակցությամբ: Ուսումնասիրելով ՀՀ տնտեսության ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները՝ առանձնացվել են այն ոլորտները, որոնց միջոցով հիմնականում գեներացվում է ՀՀ տնտեսական ակտիվության աճը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, գյուղատնտեսության և տնտեսության այլ գերակա ոլորտների կազմակերպությունների ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշների միջոցով²⁰:

Իրականացվել է ՀՀ կազմակերպությունների ֆինանսական կայունության ցուցանիշների համեմատական վերլուծություն ԵԱՏՄ երկրների (Ռուսաստան, Բելառուս, Հայաստան) օրինակով: Ուսումնասիրության հիմք են հանդիսացել այդ երկրների 2017թ. վիճակագրական ծառայությունների պաշտոնական տվյալները: Ստորև ներկայացված է ԵԱՏՄ երկրների կազմակերպությունների ֆինանսական կայունությունը բնութագրող, մասնավորապես ընթացիկ իրացվելիության, ինքնավարության և սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության ցուցանիշների համեմատական վերլուծությունը:

¹⁹ ՀՀ-ում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ, էջ 13, հասանելի է՝ http://37.139.11.226:8000/storage/uploads/files/news/H3MFF9nesC2jVRW2jll0cYcSTsBmeas8XuCmzpgGs3.pdf?fbclid=IwAR2H0v2IDhHj dCvbOPkRIsEeuPbPvVMxgU8Dcz4e64Ve-wNwq_qyY46CDPM

²⁰ ՀՀ կառավարության կողմից հանքարդյունաբերությունը գերակա ոլորտներ չի համարվում, սակայն հաշվի առնելով երա արտահանման ուղղվածությունը և այն հանգամանքը, որ դա մեծապես ազդում է տնտեսության ակտիվության վրա, այն ներառվել է դիտարկվող ոլորտների ցանկում:

Աղյուսակ 4. ԵԱՏՍ որոշ երկրների կազմակերպությունների ֆինանսական կայունության ցուցանիշների համեմատական վերլուծությունն՝ ըստ 2017 թ. տվյալների (%)²¹

Ընթացիկ իրացվելիության գործակից			
	ՌԴ	ԲՀ	ՀՀ
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	135.6	158.15	695
Հեռահաղորդակցություն	85.7	234.7	508
Հանքարդյունաբերություն	141.4	154.9	49.7
Գյուղատնտեսություն	154.8	117.3	856
Այլ խոշոր հարկատու	98.5	181.7	133
Ինքնավարության գործակից			
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	33.6	60.05	61.6
Հեռահաղորդակցություն	32.7	54.9	66.9
Հանքարդյունաբերություն	52.6	85.7	44.2
Գյուղատնտեսություն	39.9	51.6	57.2
Այլ խոշոր հարկատու	57.6	61.05	34.0
Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակից			
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	6.3	37.6	39.2
Հեռահաղորդակցություն	-162.8	57.4	9.1
Հանքարդյունաբերություն	-43.9	34.6	-39.3
Գյուղատնտեսություն	-33.7	14.3	-18.4
Այլ խոշոր հարկատու	-71.6	42.3	-39

Գնահատելով ԵԱՏՍ երկրների՝ մասնավորաբար Հայաստանի, Ռուսաստանի և Բելառուսի տնտեսության վերոնշյալ ոլորտների ֆինանսական կայունության գործակիցները՝ **կատարվել է ֆինանսական կայունության և սնանկացման հավանականության ինքնագրալային գնահատում որոշելու համար, թե ֆինանսական ցուցանիշները որքանո՞վ են ազդում ոլորտի սնանկացման վրա և որքա՞ն է գնահատվում սնանկացման հավանականությունը:**

Աղյուսակ 5. ԵԱՏՍ երկրների առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության և սնանկացման հավանականության գնահատումը ֆինանսական վիճակի ինտեգրալային գնահատման մեթոդով²²

	Ռուսաստան		Բելառուս		Հայաստան	
	Իրացվելիություն	Ինքնավարություն	Իրացվելիություն	Ինքնավարություն	Իրացվելիություն	Ինքնավարություն
SS	5.76	2.10	6.72	3.76	29.52	3.86
Հեռահաղորդակցություն	3.64	2.05	9.97	3.44	21.58	4.19
Հանքարդյունաբերություն	6.01	3.29	6.58	5.36	2.11	2.77
Գյուղատնտեսություն	6.58	2.50	4.98	3.23	36.36	3.58
Այլ խոշոր հարկատու	4.18	3.61	7.72	3.82	5.65	2.13

²¹ Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ 2017թ. ՀՀ, ՌԴ, ԲՀ կազմակերպությունների ֆինանսական կայունության ցուցանիշները: ՀՀ-ի ցուցանիշներն 20.03.2020թ. առկա չեն, ընդ որում Բելառուսի Հանրապետության վիճակագրական պաշտոնական կայքէջում 2019թ. որոշյալ «ինքնավարության» գործակիցը բացակայում է, իսկ Ռուսաստանի Դաշնության վիճակագրական պաշտոնական տեղեկագրում վերոնշյալ տվյալները թարմացված չեն:

²² Կազմվել է հեղինակի կողմից, աղբյուրը՝ С.П. Кюрджиев, А. А. Мамбетова, Е.П. Пешкова Интегральная оценка финансового состояния предприятий региона, Москва, 2016, с. 586-601, տեղեկատվական բազան՝ նշված գերակա ոլորտների կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները (տե՛ս azdarar.am կայքէջը):

Ֆինանսական կայունության գնահատման ինտեգրալային մեթոդի համաձայն՝ ֆինանսական կայունության բացասական տիրույթ է համարվում, երբ ինքնավարության գործակիցը 0-ից ցածր արժեք է ունենում, իսկ իրացվելիության գործակիցը՝ 10-ից ցածր: *Ֆինանսական կայունության ոչ բավարար տիրույթ է համարվում, երբ ինքնավարության գործակիցն ընկած է 0-ից 3 միջակայքում, իսկ իրացվելիությունը՝ 10-20: Ֆինանսական կայունության տիրույթ է համարվում, երբ ինքնավարության գործակիցն ունենում է 3-ից մեծ արժեք, իսկ իրացվելիության գործակիցը՝ 20-ից մեծ*²³: Հետազոտության արդյունքները ներկայացված են վերևում բերված աղյուսակում²⁴:

Այսպիսով, վերլուծության արդյունքում ստացված տվյալների համաձայն, ՀՀ-ում, բացի հանքարդյունաբերությունից, մյուս ոլորտների կազմակերպությունները ֆինանսապես կայուն են, և սնանկացման հավանականությունը գնահատվում է ցածր: ՌԴ-ում իրացվելիության ցուցանիշով առաջատար դիրք է զբաղեցնում գյուղատնտեսությունը, ինքնավարության ցուցանիշով՝ տնտեսության խոշոր հարկատուները, իսկ Բելառուսի Հանրապետությունում 9.97 գործակիցով՝ հեռահաղորդակցությունը, 5.36 գործակիցով՝ հանքարդյունաբերությունը²⁵:

Երրորդ գլխում իրականացվել է նաև ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների **հավանական սնանկացման վրա ազդող գործոնների գնահատում բինարական պրոբիթ մոդելի օգնությամբ**: Նպատակը *պրոբիթ մոդելի կիրառությամբ*²⁶ կազմակերպությունների սնանկացման վրա ֆինանսատնտեսական հիմնական ցուցանիշների ազդեցության չափի գնահատումն է: Տնտեսագիտության մեջ բինարական մոդելը նկարագրում, բացատրում և կանխատեսում է 2 այլընտրանքների միջև կատարված ընտրությունը և պատասխանում է «ո՞ր մեկը» հարցին²⁷: Վերջավոր ընտրության փորձագիտական վերլուծության համար նպատակահարմար է օգտագործել մեթոդներ և մոդելներ, ինչպիսիք են լոգիթ և պրոբիթ բինարական ռեգրեսիոն մոդելները: Հետազոտության համար որպես *կախյալ փոփոխական դիսկրիմինանտ* է կազմակերպության սնանկ իրավիճակում *հայտնվելը (ընդունում է 0 և 1 արժեքներ)*, իսկ *անկախ փոփոխականներն են ոչ ընթացիկ ակտիվները, ընթացիկ ակտիվները, ոչ ընթացիկ պարտավորությունները, ընթացիկ պարտավորությունները, համախառն շահույթը, զուտ շահույթ շահութահարկից հետո և սեփական կապիտալը*: ՀՀ կազմակերպությունների սնանկացման վրա ֆինանսական ցուցանիշների ազդեցության չափի գնահատման արդյունքները պրոբիթ մոդելի կիրառությամբ²⁸ հանգեցրել են հետևյալ հավասարմանը.

$$Bankruptcy_i = a_0 + (-2.457,119) * a_1 + 2,037,345 * a_2 + (-1.765,033) * a_3 + (-1.972,672) * a_4 + 46,701.4 * a_5 + (-7,124,617) * a_6$$

որտեղ,

$Bankruptcy_i$ -ն i-րդ կազմակերպության սնանկ լինելու հավանականությունն է,
 a_1 -ը i-րդ կազմակերպության ոչ ընթացիկ ակտիվներն են,
 a_2 -ը i-րդ կազմակերպության ընթացիկ ակտիվներն են,

²³ Ֆինանսական ցուցանիշների սակավաթիվ լինելը պայմանավորված է տվյալների հասանելիությամբ:

²⁴ Ուսումնասիրությունն իրականացվել է Кюрджиев С.П., Мамбетова А. А., Пешкова Е.П., Интегральная оценка финансового состояния предприятий региона, Москва, 2016, с. 586-601 տեղ գրած համանման հետազոտության հիման վրա:

²⁵ Մնացական Գ., Սարգսյան Վ., Տեփոյան Վ. Սնանկության կանխարգելման հիմնարկները ֆինանսական կայունության համատեքստում, ԵՊՀ Բանբեր համալսարանի, 2019 (1), էջ 50-62

²⁶ Քանակական վերլուծությունն իրականացվել է R ծրագրավորման լեզվի glm փաթեթի կիրառությամբ: <http://www.stat.umn.edu/geyer/5931/mle/glm.pdf>, (դիտման ամսաթիվ՝ 07.07.2020թ.)

²⁷ Araghi, M. K., & Makvandi, S. (2013). Comparing logit, probit and multiple discriminant analysis models in predicting bankruptcy of companies. Asian Journal of Finance and Accounting, 5(1), p.48-59

²⁸ Մոդելի կիրառությունը տե՛ս <http://www.stat.umn.edu/geyer/5931/mle/glm.pdf>, (դիտման ամսաթիվ՝ 07.07.2020թ.):

- a3-ը i-րդ կազմակերպության սեփական կապիտալն է,
- a4-ը i-րդ կազմակերպության ոչ ընթացիկ պարտավորություններն են,
- a5-ը i-րդ կազմակերպության ընթացիկ պարտավորություններն են,
- a6-ը i-րդ կազմակերպության զուտ շահույթն է հարկումից հետո:

Արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպության *ոչ ընթացիկ ակտիվները, ոչ ընթացիկ պարտավորությունները, շահույթը հարկումից հեպո և կապիտալը սնանկանալու վրա բացասական ազդեցություն են ունեցել, որոնցից ամենամեծ կշիռն ունեցել է a6 ցուցանիշը (զուտ շահույթ հարկումից հեպո):* Հետազոտության արդյունքները փաստում են, որ կազմակերպությունների սնանկության հավանական բնութագիրը էապես պայմանավորված է եղել դրանց ընթացիկ պարտավորությունների մեծությամբ (առավելապես) և ընթացիկ ակտիվներով, մինչդեռ գործոնների համախմբում ընդգրկված մյուս ցուցանիշները ունեցել են հակադիր ազդեցություն²⁹:

Առենախոսության երրորդ գլխում կատարվել է նաև **ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների սնանկացման հավանականության համակցված մեթոդով գնահատում**: Ուսումնասիրության են ենթարկվել տնտեսական գործունեության մեծածախ և մանրածախ առևտրի թվով 151 կազմակերպություններ: Վերլուծության համար հիմք են ծառայել վերջիններիս՝ մամուլում ամենամյա պարբերականությամբ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները, մասնավորապես՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը (առ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ): Ֆինանսական վիճակի վերլուծությունը իրականացվել է՝ ելնելով վերջիններիս անվճարունակության ռիսկի գնահատման դիրքերից, որի համար օգտագործվել են գնահատման համար մշակված 4 մոդել՝ Ալտմանի քառագործոն և հնգագործոն սքորինգային մոդելները, Սփրինգեյթի և Ֆուլմերի սքորինգային մոդելները: Վերլուծության ընթացքում առանձնացվել են կազմակերպությունների՝ անվճարունակության ռիսկը բնութագրող երեք գոտիներ՝ *անվճարունակության բարձր, ցածր և միջին ռիսկի գոտի*: Առաջարկվող երեք գոտիներում կազմակերպությունները բաշխվել են հետևյալ սկզբունքով: **Ստանդարտ մոտեցում**-Կազմակերպությունը, որն առնվազն 2 մոդելի կողմից գնահատվել է որպես անվճարունակության ցածր ռիսկի գոտում գտնվող, տեղակայվել է առաջարկված երեք գոտիներից ցածր ռիսկի գոտում: Կազմակերպությունը, որը մոդելներից գոնե մեկի կողմից գնահատվել է որպես միջին ռիսկի գոտում գտնվող, տեղակայվել է առաջարկված երեք գոտիներից անվճարունակության միջին ռիսկի գոտում: Կազմակերպությունը, որը մոդելներից առնվազն երկուսի կողմից գնահատվել է որպես բարձր ռիսկի գոտում գտնվող, տեղակայվել է առաջարկված երեք գոտիներից անվճարունակության բարձր ռիսկի գոտում: **Խիստ մոտեցում**-Կազմակերպությունը, որը բոլոր մոդելների կողմից գնահատվել է որպես անվճարունակության ցածր ռիսկի գոտում գտնվող, տեղակայվել է ցածր ռիսկի գոտում: Կազմակերպությունը, որը մոդելներից առնվազն 2-ի կողմից գնահատվել է որպես միջին ռիսկի գոտում գտնվող, տեղակայվել է առաջարկված երեք գոտիներից անվճարունակության միջին ռիսկի գոտում: Կազմակերպությունը, որը մոդելներից առնվազն 2-ի կողմից գնահատվել է որպես բարձր ռիսկի գոտում գտնվող, տեղակայվել է առաջարկված երեք գոտիներից անվճարունակության բարձր ռիսկի գոտում:

²⁹ Մնացականյան Գ., Տեփոյան Վ., Սարգսյան Վ. Ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատման մոդելը ՀՀ առևտրային կազմակերպությունների օրինակով, Հանրային կառավարում գիտական հանդես, 2019 (1), էջ 159-166

Երրորդ գլխում իրականացվել է նաև **կազմակերպությունների վարկանիշավորում ֆինանսատնտեսական ցուցանիշների կարևորության աստիճանի գնահատմամբ:**

Վարկանշման դիսկրետ մոդելավորման մոտեցումը: Ուսումնասիրությունում ներառվել են մեծածախ ու մանրածախ առևտրի, շինարարության և մշակող արդյունաբերության ոլորտները ներկայացնող թվով 360 կազմակերպություններ, որոնք տրոհվել են երկու դասերի՝ **գործող և սնանկ:** Դիտարկվել են դրանց ֆինանսատնտեսական գործունեության հետևյալ տեղեկատվական բազային գործոնները՝ համախառն շահույթ, սեփական կապիտալ, գործառնական շահույթ, ընթացիկ պարտավորություններ, ոչ ընթացիկ պարտավորություններ, զուտ շահույթը՝ նախքան շահութահարկի վճարումը, զուտ շահույթը՝ շահութահարկը վճարելուց հետո, ընթացիկ ակտիվներ, ոչ ընթացիկ ակտիվներ: Վերոնշյալ 9 գործոնները դրանց քանակական հարաբերությունների հիման վրա ձևափոխվել են 36 (**C₅**) հայտանիշների, որոնք իրենց հերթին ստանդարտացվել են: Դրանցից ընտրվել են 15 առավելագույն ստանդարտ շեղման գործակից ունեցող հայտանիշները, որոնք և ներառվել են դիսկրետ մոդելավորման թեստային հետազոտություններում: Ստացված արդյունքները բերված են ստորև աղյուսակում: Յուրաքանչյուր ոլորտը ներկայացնող կազմակերպությունների համար փակուղային թեստերի³⁰ միջոցով հաշվարկվել են ընտրված հայտանիշների *տեղեկատվական (տարբերակող) կշիռները*, որոնք ընկած են կազմակերպությունների հաջողակ կամ սնանկ լինելու հարցում հայտանիշների կարևորությունը որոշելու հիմքում: Հետազոտության տվյալների համաձայն ներկայացնենք այն հայտանիշները, որոնք աննվազ 2 ոլորտներում ընդհանուր են: Նշենք նաև, որ տեղեկատվական կշիռները, ըստ կատարված հետազոտության արդյունքների, պայմանականորեն բաժանվել են 3 տիպի: Առաջինը՝ **[0-0.21]** միջակայքը համարվում է **պակաս կարևոր** հայտանիշ, երկրորդը, որն ընդգրկում է **[0.22-0.5]** միջակայքը, համարվում է **կարևոր**, իսկ երրորդը՝ **[0.51-1]** միջակայքը համարվում է **առավել կարևոր** հայտանիշ: *Օբյեկտի տեղեկատվական կշիռները* նույնպես հաշվարկելի են թեստային հետազոտությունում: Այդ նպատակով դիտարկվել են *գործող* կազմակերպությունները, որոնք բաժանվել են «տիպային հաջողակ» և «տիպային անհաջողակ» դասերի: Հիմք ընդունելով հայտանիշների տեղեկատվական կշիռները՝ յուրաքանչյուր ոլորտի համար հաշվարկվել են օբյեկտների տեղեկատվական կշիռները, որոնց հիման վրա առանձնացվել են «տիպային հաջողակ» կազմակերպությունները: Յուրաքանչյուր ոլորտում որպես «*տիպային հաջողակ*» համարվել են այն կազմակերպությունները, որոնք առանձին ոլորտներում լավագույն ցուցանիշների թվով գերազանցել են ոլորտի մյուս կազմակերպություններին:

Այսպիսով, դիտարկելով ՀՀ տնտեսական գործունեության 3 ոլորտների կազմակերպությունների՝ հետազոտության արդյունքներով ստացված ֆինանսական կշիռները, փաստենք, որ մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում լավագույն քառյակում են հայտնվել համապատասխանաբար «Օրիֆլեյմ Քոսմետիքս», «Արմինվեստ», «Ցեպելին Արմենիա» և «Ջի Առ Ի Փի Սի Օ» կազմակերպությունները, համապատասխանաբար՝ 11, 10, 9, 9 ֆինանսական կշիռներով: Մշակող արդյունաբերության ոլորտում լավագույն քառյակում են «Երևանի գարեջուր», «Ավանի

³⁰ T աղյուսակի թեստը կոչվում է փակուղային, եթե նրա ոչ մի սեփական ենթարգմություն այդ աղյուսակի համար թեստ չէ: Արանից հետևում է, որ եթե T աղյուսակի փակուղային թեստից հեռացնենք ցանկացած սյունակ (հայտանիշ), ապա այն այլևս այդ աղյուսակի համար թեստ չի լինի: Փակուղային թեստն իրենից ներկայացնում է T աղյուսակում պարունակվող տեղեկատվության այնպիսի «սեղման» արդյունքը, որի միջոցով կարելի է կազմակերպություններն իրարից տարբերել:

աղի կոմբինատը», «Ինթերնեշնլ Մասիս տաբակ» և «Գրանտ Մաստեր» կազմակերպությունները համապատասխանաբար՝ 14, 13, 13, 12 ֆինանսական կշիռներով: Երրորդ՝ շինարարության ոլորտում լավագույն քառյակում են «Ինժիներինգ», «ՍՄԿ Ինժիներինգ», «Սեվերստոլոյ», «Արմատուկոմ» ընկերությունները համապատասխանաբար 14, 12, 11, 10 ֆինանսական կշիռներով:

Կազմակերպությունների ներքին վարկանիշավորում՝ հայտանիշների կարևորության աստիճանի գնահատման մոդելի մասին: ՀՀ կազմակերպությունների ֆինանսատնտեսական վերլուծության երկրորդ մեթոդի կիրարկմամբ ուսումնասիրվել են տնտեսական գործունեության վերը բերված երեք ոլորտների միայն գործող կազմակերպությունները: Յուրաքանչյուր ոլորտի համար ընտրվել են 15-ական հարաբերական հայտանիշներ: Այնուհետև ընտրվել են 10 կազմակերպություններ, որոնց համար տվյալ հայտանիշի արժեքը ամենամոտոն է: Նշված եղանակով տվյալ ոլորտի յուրաքանչյուր կազմակերպության համար հաշվարկվել է բոլոր հայտանիշների առումով լավագույն տասնյակում գտնվելու թիվը (դա [0;15] միջակայքի որևէ ամբողջ թիվ է, որը կանվանենք կազմակերպության «ֆինանսական կշիռ» կամ «օբյեկտի տեղեկատվական կշիռ»): Որքան մեծ լինի տվյալ կազմակերպության ֆինանսական կշիռը, այնքան մեծ է հավանականությունը, որ այդ կազմակերպությունը կլինի հաջողակ՝ ֆինանսական ապահովվածության առումով՝ կայուն: Եվ հակառակը՝ որքան փոքր է ֆինանսական կշիռը, ապա մեծ հավանականությամբ այդ կազմակերպությունը անհաջողակ է:

Դիսկրետ մոդելավորման և ներքին վարկանիշավորման մեթոդներով կատարված հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ մեթոդով կատարված հետազոտություններում ստացված արդյունքները համադրելի են: Օրինակ շինարարության ոլորտում «Ինժիներինգ» կազմակերպությունը երկու հետազոտությունների արդյունքներում էլ հայտնվել է «տիպային հաջողակ» կազմակերպությունների շարքում: Մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում «Արմինվեստ» և «Ցեպելին Արմենիա» կազմակերպությունները 2 մեթոդներով կատարված արդյունքների համաձայն հայտնվել են «տիպային հաջողակների» շարքում: Մշակող արդյունաբերության ոլորտում «Երևանի գարեջուրը» և «Գրանդ Մաստեր» կազմակերպությունները երկու հետազոտություններում էլ հայտնվել են «տիպային հաջողակ» կազմակերպությունների շարքում:

Առենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները.

1. ՀՀ ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների սնանկության հիմնախնդրի ուսումնասիրությունն ու սնանկացման կանխարգելման ու կառավարման վերաբերյալ արդյունավետ լուծումների առաջադրումը պահանջում է սնանկության գործընթացի ծագումնաբանության ուսումնասիրություն, կառավարման առանձնահատկությունների բացահայտում և գործընթացի դրսևորման և առաջացող հետևանքների պարզորոշում: Տարանջատվել են գործածվող երկու՝ «անվճարունակություն» և «սնանկություն» եզրույթները, որոնց գործադրման շփոթից երբեմն զերծ չէ մասնագիտական գրականությունը: Անվճարունակությունը, որպես պարտադիր վճարումների կատարման պարտականության և/կամ ամբողջ ծավալով պարտապանների դրամական միջոցների պահանջների բավարարման անկարողություն, գործածվում է որպես վճարելու անկարողության հոմանիշ: Ընդհանրական այդ հատկությունը բնորոշ է նաև սնանկությանը, սակայն վերջինիս պարագայում այն

դիտվում է որպես պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն մարելու հնարավորության բացակայության մասին փաստացի հաստատում:

2. Գործընթացի կառավարմանը նպատակադրված սկզբունքային սխեման, ստանձնելով յուրօրինակ պարադիգմայի (հարացույցի) դերակատարում, ունի իր ենթահամակարգերը: ՀՀ-ում տնտեսության առևտրային կազմակերպությունների սնանկության գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից ընդօրինակելի է գերմանական փորձը, երբ կարգավորման հիմքում դրվում է ոչ թե լուծարման, այլ վերակազմավորման խնդիրը: Ինչպես առողջապահության բնագավառում առաջնայնությունը տրվում է ախտորոշմանն ու կանխարգելմանն ուղղված պրոֆիլակտիկային, այնպես էլ կազմակերպությունների սնանկության պարագայում ֆինանսական կայունության ապահովումն ու ֆինանսական առողջացումը դառնում են կազմակերպության չլուծարման գրավական: Նման եզրահանգումը հիմնավորվում է նաև վիճակագրությամբ: Նկատելի է, որ անցած տարիներին կազմակերպությունների սնանկության գործերի վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ ֆինանսական առողջացումը իրեն զգացնել չի տվել, իսկ առաջնությունը տրվել է այդ գործընթացում ընդգրկված կազմակերպությունների լուծարմանը: Բավական է վկայակոչել, որ 2019թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ սնանկ է ճանաչվել 5062 կազմակերպություն, իսկ տնտեսավարող սուբյեկտներից ֆինանսական առողջացում անցածները մեկ տասնյակ էլ չեն կազմում: Նման մոտեցման հետևանքով, ըստ էության, ոչնչացվում է սնանկության գործընթացում գտնվող կազմակերպությունների՝ տարիների ընթացքում ձևավորված սոցիալական ենթակառուցվածքը, ավելանում է գործազուրկների թվաքանակը, խաթարվում են կայացած արտադրատնտեսական կապերը, շղթայաբար տարածվելով ողջ տնտեսության վրա, և որպես հետևանք՝ փոշիանում են այդ կազմակերպությունների ակտիվները: Դրանով է բացատրվում նաև, որ ՀՀ-ում առևտրային կազմակերպությունների սնանկության գործընթացը առաջադիմական փորձ ունեցող երկրների համեմատությամբ ժամանակի տեսանկյունից ձգձգվում է 2-3 անգամ ավելի շատ, անհամեմատ բարձր են ծախսատարությամբ, և այս ամենի պատճառով ցածր է սնանկության մեջ ընդգրկված ակտիվների վերադարձելիությունը: Վերջինս լուրջ ազդակ է սնանկության հատկապես կազմակերպման գործընթացում տեղ գտած թերությունների, կանխարգելմանն ու կառավարման տնտեսաիրավական կարգավորումների մակարդակի բարձրացման պահանջի տեսանկյունից: Այդ կարգավորումները, սկիզբ առնելով կազմակերպությունների ֆինանսատնտեսական իրավիճակի ախտորոշումից, պետք է միտված լինեն դատական համակարգի, տեղեկատվական և ընթացակարգային բարելավումների:

3. ՀՀ-ում կազմակերպությունների պարտավորությունները (2019թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 3 տրիլիոն 582 մլրդ դրամ), որը գրեթե համադրելի է ՀՀ արտաքին պարտքի հետ, չի առանձնանում իր շահեկան կառուցվածքով: Այս հանգամանքը ընդգծում է սնանկության կանխարգելմանն ու գործընթացի արդյունավետ կառավարման կարևորությունը տնտեսական քաղաքականության իրականացման ընթացքում: Սպառողական գների կայունության պայմաններում աշխատատեղերի պահպանումը Կառավարությանն ու Կենտրոնական բանկի առաջնահերթ խնդիրներն են: Դրանք սրվել են ՀՀ-ում 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, 2014թ. ՌԴ փոխարժեքի կտրուկ փոփոխման, 2020թ. մարտ ամսվանից սկսած COVID-19 պանդեմիայի հետևանքով, որոնք պահանջել են ճգնաժամային կառավարման տարրերի ներդրում: Դրանք ներմուծվել են տարաբնույթ աջակցության ծրագրերի միջոցով՝ 2009թ. պետական բյուջեի պակասուրդի մեծացմամբ՝ մինչև 7.5 տոկոս, 2020թ. փոքր և միջին

ծեռնարկություններին աջակցման ծրագրերի իրագործմամբ՝ ավելի քան 150 մլրդ դրամ սոցիալական փաթեթների շրջանակներում: Այս համատեքստում սնանկության արդյունավետ մեթոդների ու մոդելների, ընթացակարգերի ու կառուցակարգերի շարունակական բարելավումների պահանջը այլընտրանք չունի ճգնաժամային և հետճգնաժամային հետևանքների չեզոքացման տեսանկյունից:

4. Սնանկությանը վերաբերող օրենսդրության և ինստիտուցիոնալ կառույցների նպատակը ֆինանսական կայունության պահպանման, ինքնուրույն վերակազմավորման, սնանկության գործընթացը նվազագույն կորուստներով ավարտելու մղումն է: Այդ նպատակին են ծառայում առևտրային կազմակերպությունների պարտավորությունների մարման օպտիմալ կառուցվածքը՝ հերթագայության, վճարման չափերի, մարման ճիշտ ժամանակի ընտրությամբ: Սնանկության ընթացակարգերի արդյունավետ կառավարումը էապես փոխում է կազմակերպության ենթահամակարգերի աշխատանքը: Դիցուք, դատարանների կողմից ամրագրված ընթացակարգերի անմիջական կիրարկումներով պետք է փոփոխվեն կառավարման գործընթացի մասնակիցների լիազորությունները: Այդ փոփոխությունները պետք է վերաբերեն կազմակերպությունների ֆինանսական առողջացման ծրագրին, արտաքին կառավարման բարելավմանը, մրցունակ արտադրանքի թողարկմանը, հաշտության համաձայնագրերի կնքմանը և սնանկության մյուս ընթացակարգերին: Բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված խնդիրների լուծմանը իր մաքսիմալ նպաստը կբերի սնանկության ինստիտուտի նպատակադրումը՝ պարտապանի գույքի իրացմամբ՝ պարտատերերի պահանջները բավարարելու ու իրավունքները վերականգնելու առումով: Միայն գույքի վաճառքով չէ, որ պետք է «փակվեն» պարտատերերի պահանջները, այլև կազմակերպության հնարավորինս առողջացումը պետք է մղվի առաջին պլան, որպեսզի այն մնա բիզնեսում՝ պահպանելով աշխատատեղերը: Այս նպատակադրումը դեռևս բավարար կենսունակություն չունի, որը, մի կողմից դատական համակարգի «տեղապտույտի», և, մյուս կողմից, եղած ընթացակարգերի ոչ բավարար գործադրման հետևանք է:

Իրենց բնույթով պակասսնանկությունները գործադրվել են տարբեր սխեմաներում: Շատ հաճախ միտումնավոր ու շահադիտական կառուցակարգերի միջոցով արդարադատական չարդարացվող մոտեցումները հանգեցրել են կազմակերպությունների գույքի օտարման ու վատնման անօրինական իրավատնտեսական կարգավորումների, որոնց օրինակները բազմաթիվ են: Նշվածը հետևանք է սնանկության գործընթացի կազմակերպման ոչ թափանցիկ գործողությունների, ինչպես նաև գույքի ընդհանուր վաճառքների կազմում էլեկտրոնային աճուրդների ցածր տեսակարար կշռի:

5. Կազմակերպության ֆինանսատնտեսական իրավիճակի օբյեկտիվ վերլուծության նման տրամաբանությունը ակներև է դառնում հետևյալ զուգահեռները իրականացնելիս. կախված այն բանից, թե ինչպես է առողջապահության ոլորտում կառավարում հիվանդության ախտորոշումը, դրանով էլ պայմանավորված է հետագա բուժման բարենպաստ ելքը: Նույն կերպ՝ որքանով ճիշտ են ախտորոշվում ու դասակարգվում առողջ և մրցունակ կազմակերպությունները պոտենցիալ սնանկ (հավանական մեծ բնութագիր ունեցող) կազմակերպություններից, այդքանով մեծանում է հավանականությունը խուսափելու սնանկության գործընթացում ընդգրկվելուց, առավել ևս՝ սնանկության հետևանքով լուծարվելուց: Նշված խնդրի լուծումը արդեն իսկ նախապայման է դառնում միկրոտնտեսության մակարդակում սնանկության դեպքերը սահմանափակելու, դրանով իսկ հասարակությանը հասցվող մարդկային, նյութական ու ֆինանսական վնասները նվազագույնի հասցնելու համար:

Առենախոսությունում առևտրային գործող և սնանկ ճանաչված կազմակերպությունների ցանկից ընտրվել են առևտրի, շինարարության և մշակող արդյունաբերության ոլորտները: Սնանկության հավանակության որոշման, վարկանիշավորման աղեկվատ, համընդհանուր գործիքի բացակայությունը հետազոտողներին առաջադրում է տարատեսակ մեթոդների ու մոդելների կիրառություններ: Այդ նպատակով նախևառաջ իրականացվել են գնահատման տարատեսակ մոդելներ. *Ֆինանսական կայունության ինդեքսային գնահատում*, բինարական պրոբիթ մոդելի միջոցով կազմակերպությունների *հավանական սնանկացման վրա ազդող գործոնների գնահատում*: Կիրառվել են նաև էկոնոմետրիկ, դիսկրետ մոդելավորման, ներքին վարկանիշավորման, մեթոդների համակցման եղանակներով վերլուծության մեթոդներ, որոնք նպատակ են հետապնդում պարզել տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպությունների ցուցանիշների ազդեցությունը ավճարունակության ռիսկի առաջացման տեսանկյունից: Վերոնշյալ մեթոդների և մոդելների օգնությամբ գործող և սնանկ կազմակերպությունների համար որոշվել են ֆինանսատնտեսական ցուցանիշների տեղեկատվական (տարբերակող) *կշիռները* «հաջողակ» կամ «սնանկ» լինելու հարցում: Հետազոտության հաջորդ հատվածում միայն գործող կազմակերպությունների համար որոշվել են օբյեկտների տեղեկատվական (տարբերակող) կշիռները, ըստ որի՝ կազմակերպությունները բաժանվել են «տիպային հաջողակ» և «տիպային անհաջողակ» դասերի: Հետազոտության արդյունքները էական ազդեցություն կունենան կազմակերպությունների բազմաչափանիշային վերլուծության համար: Բազմակողմ այդ խնդիրների շարքում են կազմակերպությունների վարկունակության գնահատումը, ռիսկ-մենեջմենթը, ֆինանսական հոսքերի կառավարումը և այլն:

6. Հետազոտության վերը նշված եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են սինթեզվել, ամփոփ ներկայացվել որպես միկրոմակարդակում տնտեսության պետական միջամտության, կառավարման արդյունարար միջոց: Վերջինս արտահայտվում է առևտրային կազմակերպությունների առողջացմանը, կենսունակության բարձրացման ու ավելացված արժեքի բազմապատկմանն ուղղված աջակցման քաղաքականությամբ՝ ամրագրված մոդելավորման գործիքակազմով ախտորոշման, դասակարգման, կառավարման միջոցառումների համակարգով:

Առաջարկվում է, որ ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր շահագրգիռ կառույցները վարեն առավել պրոակտիվ քաղաքականություն, որևէ կերպ զերծ չմնան, հատկապես ճգնաժամային իրավիճակներում, աջակցման գործուն և արդյունավետ ծրագրերի ներդրումից: Առևտրային կազմակերպություններին աջակցելուն ուղղված որոշումների նախագծերը պետք է ունենան հստակ հասցեագրումներ (ոլորտ, կազմակերպության կտրվածքով) բազմաչափանիշային հիմնավորումներով: Այդ իմաստով, որպես դրական փորձի օրինակ, կարելի է վկայակոչել ճգնաժամի հետևանքների վերացմանն ուղղված ՀՀ կառավարության թիվ 23 ծրագիրը: Բազմաչափանիշային հիմնավորումներով աջակցման ծրագրերի մշակումն ու կենսագործումը խիստ արդյունարար կարող է լինել, եթե այդ չափանիշները ներառում են թողարկվող արտադրանքի կամ մատուցված ծառայության արտահանելիության, բարձր արտադրողականության և այլ ցուցանիշներ:

Չափանիշների շարքում առանձնակի տեղ պետք է զբաղեցնեն կազմակերպություններում կայուն աշխատատեղերի պահպանմանն ու հավելյալ աշխատատեղերի ստեղծմանը միտված գործողությունները, նկատի առնելով, որ

արտադրության գործոնների թվում մարդկային կապիտալի բաղադրիչը (ինժեներների, վարձու այլ աշխատող մասնագետների կարողությունները) առանձնահատուկ է: Ճգնաժամի պարագայում ամենամեծ հարվածը ստանում է այդ բաղադրիչը: Ակներև է, որ ճգնաժամը մարդկային շփումների դադարեցման հետևանքով հանգեցնում է պահանջարկի նվազեցմանը: Կազմակերպության չաշխատելը՝ արդյունքում պահանջարկի նվազումը, հանգեցնում է ֆինանսատնտեսական նախորդ հետազոծին վերադարձի, վերականգնողական հավելյալ դժվարությունների: Դրանց տնտեսաիրավական կարգավորումները իրագործելի կդառնան, եթե կիրառվի օրինակ հետևյալ մոտեցումը՝ վարկերի տրամադրում այն հաշվով, որ դրանք վերաճեն դրամաշնորհների, տրվեն հարկային արձակուրդներ և այլն: Այլ կերպ, օգնությունը պետք է ուղղված լինի աշխատատեղերի հնարավորինս պահպանմանն ու ավելացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ 7 հոդվածներում.

1. Սարգսյան Վ. (2017). Սնանկություն. տնտեսաիրավական կարգավորման և կառավարման որոշ հիմնախնդիրներ, ԵՊՀ, Բանբեր համալսարանի 3(24), էջեր 41-53:
2. Սարգսյան Վ. (2017). Սնանկացում. գործընթացներ և կառավարում, Այլընտրանք եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջեր 194-207:
3. Սարգսյան Վ. (2018). Անվճարունակության կանխարգելման կառուցակարգային և օրենսդրական բարելավումների հիմնահարցերը, Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, Պարբերական գիտական ժողովածու, Գիրք 11, էջեր 251-262:
4. Սարգսյան Վ. (2018). ՀՀ առևտրային կազմակերպությունների սնանկացման իրավատնտեսական կարգավորումը սահմանադրականության համատեքստում, ՀՊՏՀ Բանբեր (3), 2018, էջեր 94-101:
5. Մնացականյան Գ., Սարգսյան Վ., Տեփոյան Վ. (2019). Սնանկության կանխարգելման հիմնահարցերը ֆինանսական կայունության համատեքստում, ԵՊՀ, Բանբեր համալսարանի.Տնտեսագիտություն (1), էջեր 50-62:
6. Մնացականյան Գ., Տեփոյան Վ., Սարգսյան Վ. (2019). Ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատման մոդելը ՀՀ առևտրային կազմակերպությունների օրինակով, «Հանրային կառավարում» գիտական հանդես (1), էջեր 159-167:
7. Մնացականյան Գ., Սարգսյան Վ., Հովհաննիսյան Մ. (2020). Ֆինանսական կայունության ախտորոշումն ու վերլուծությունը միկրոտնտեսական մակարդակում, ԵՊՀ, Բանբեր համալսարանի.Տնտեսագիտություն(2), էջեր 20-35:

ВАРСЕНИК КАРЕНОВНА САРГСЯН
АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ УПРАВЛЕНИЯ БАНКРОТСТВОМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(НА ПРИМЕРЕ НЕФИНАНСОВЫХ КОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЙ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 - «Экономика и управление хозяйством, его отраслями»

Защита диссертации состоится 04-го декабря 2020 г. в 13:30 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете.

Адрес: 0025, г. Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Одним из основных институтов формирования и построения рыночной экономики является государственное регулирование процесса банкротства коммерческих организаций, которое осуществляется структурами, обслуживающими этот процесс посредством соответствующих правовых актов. Разработка методик управления банкротством и урегулирования споров имеет большое научное и практическое значение, что определяет актуальность работы.

Цель диссертации и проблемы. Целью диссертации является разработка предложений и мероприятий для одного из ключевых институтов рыночной экономики - обеспечения финансовой устойчивости коммерческих организаций, в частности разработка организационно-экономических механизмов и методов. Также предложены меры по повышению эффективности процедур, предотвращающих банкротство. В этих целях в работе подняты и решены следующие основные задачи:

- ✓ системно проанализирован весь процесс банкротства, исследованы количественные характеристики финансово-экономического положения коммерческих организаций, по результатам хозяйственно-правового регулирования банкротства и антикризисного управления,
- ✓ выявлены проблемы, приводящие к несостоятельности коммерческих организаций и нерешенности их экономико-правового регулирования,
- ✓ обоснованы основные направления усовершенствования предотвращения и управления банкротства, совершенствования основных направлений управления коммерческих организаций путем оценки факторов, приводящие к финансовой нестабильности,
- ✓ осуществлены количественные оценки возникновения банкротства для определенной группы коммерческих организаций РА, в частности, на основе критерии выявления вероятности возникновения банкротства.

Основные результаты исследования и ее научная новизна заключаются в следующем:

1. В условиях глобализации и интеграции для малых открытых экономик выявлены основные проблемы банкротства организаций в условиях кризиса (в том числе COVID-19).

2. Раскрыта функциональная роль банкротства организаций, выявлены особенности его проявления.
3. Систематизированно представлены причины и способы выражения банкротства организаций, а также основные направления хозяйственно-правовых норм, направленных на совершенствование программ оздоровления.
4. Предложена методика создания институтов диагностики и предотвращения банкротства, а также совершенствования законодательства с целью повышения иммунитета несостоятельных организаций и улучшения управления банкротством.
5. Согласно методическим подходам ранжирования вероятности банкротства, для определенной группы организаций РА было предложено наряду с эконометрическими моделям, новые подходы к предотвращению банкротства, включением тестовых и экспертных методов и моделей оценки важности (информационных весов) критериев банкротства. Методический подход предусматривает наличие интегральных оценок, бинарной пробит-модели, комбинированного метода, а также методов дискретного моделирования и внутреннего ранжирования.

**CURRENT ISSUES OF BANKRUPTCY MANAGEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA
(CASE STUDY OF NON-FINANCIAL COMMERCIAL ORGANIZATIONS)**

Abstract of the Dissertation for pursuing the degree of PhD in Economics in the field
08.00.02 – "Economics and Management of Economy and its Spheres"

The defense of the Dissertation will take place on December 4, 2020, at 13:30 at the meeting of the Specialized Council 015 in Economics of the RA Supreme Certifying Committee acting at the Yerevan State University
Address: 52 Abovyan St., Yerevan, 0025

ABSTRACT

One of the main institutions for the formation and construction of a market economy is state regulation of commercial organizations' bankruptcy process, which is carried out through the relevant legal acts and infrastructures that serves this process. The development of bankruptcy management and settlement guidelines is of great scientific and practical importance, which determines the urgency of the work.

Purpose and objectives of the dissertation. The aim of the thesis is to develop proposals and measures on one of the key institutions of the market economy - ensuring financial stability of commercial organisations, particularly, to develop organizational and economic mechanisms and methods. Also measures of increasing the efficiency of bankruptcy proceedings are proposed.

In this respect the following issues have been proposed and solved:

- ✓ comprehensively analyzing the entire bankruptcy process, to examine the quantitative characteristics of the financial and economic situation of commercial organizations, based on the results of economic and legal regulation of bankruptcy and anti-crisis management;
- ✓ identify issues of economic and legal settlement of insolvency and bankruptcy of commercial organizations;
- ✓ substantiate the main directions of improvement of bankruptcy prevention and management of commercial organizations by assessing the factors affecting financial stability;
- ✓ conduct a quantitative assessment of the occurrence of bankruptcy for a specific sample of RA commercial organizations, in particular, according to the criterion for identifying the probability of bankruptcy.

The main scientific results and innovation of the study.

In the course of the study, results of scientific and practical significance were obtained, the scientific innovation of which is as follows:

1. Bankruptcy issues of organizations were identified for small open economies in the context of globalization and integration, in the conditions of crisis (including COVID-19);
2. Functional role of organizations' bankruptcy was revealed on the basis of study of its origins, peculiarities of its manifestation, study of the domestic and international experience of bankruptcy prevention.

3. Reasons for bankruptcy, ways of externalization and the main directions of economic-legal regulations aimed at prevention, measures and recovery programs were presented in a systematic way;
4. Methodology for diagnosing and preventing bankruptcy were created, as well as for improving legislation in order to increase the immunity of insolvent organizations and improve bankruptcy management.
5. According to the methodological approaches of rating of the bankruptcy probability criterion, for a certain sample of RA organizations, in addition to econometric models of methodological approaches to bankruptcy prevention, it is proposed to include test (information weights) and expert methods and models, including integral assessment, binary probation model, combined method, discrete modeling and internal rating.

A handwritten signature in blue ink, consisting of several overlapping loops and lines, positioned on the right side of the page.